


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի հասարակական, ողջ դ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ հաշիւան Թրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեանն ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՀԱՏ ՄԵՆ ԱԼ

Բաւական չէ որ թուրք կառավարութիւն-
նը սկսած է իր պաշտօնական հեռագիրներ-
ընդ մէջ անարշիւնք անունը տալ հայ յեղա-
փոխականներուն, —այս կերպով զանոնք խոր-
շելի դարձունելու համար Եւրոպայի աչքին,—
եւ ահա՛ հայ բողոքական քարոզիչ մըն ալ,
չաբաթապահ մը, ելեր Պոլսոյ թուրք թեր-
թի մը մէջ կը փաստաբանէ թէ «քրիստոնեայ
կոչուելու արժանի չեն անոնք»:

Անհատի մը այդ ցնորական գրութիւնը
բնականաբար անզոր է ցրտութիւն առաջ բե-
րելու մեր եւ մեր բողոքական եղբայրներուն
միջեւ, ինչպէս որ անոր նկատմամբ արտա-
յայտուած արհամարանքը չի տարածուիր բնա-
ուրիշ քարոզիչներու եւ չաբաթապահներու
վրայ: Միայն, չի հասկցանք թէ՛ կիրակիին
տեղ չաբաթը «սուրբ պահօր», աղանդաւորի
մը համար ի՞նչ պէտք է շարժառիթ կար
այս տեսակ վարդապետութիւն մը փորձելու
ճիշդ այն միջոցին երբ իրմէ քանի մը քայլ
անդին մահօ պատիժ կարտասանուէր խումբ մը
գեղարդ երիտասարդներու դէմ: Այդ մարտա-
կրօնը աւելի քրիստոնէական լինելով հնա-
զանգած չի՞ պիտի ըլլար Տիրոջը պատուէր-
ներուն, հետեւելով այնքան միտնողներու
եւ քարոզիչներու մարդասիրական վեհանքն ու
ընկալին. իսկ եթէ անկարող էր անոնց ճամ-
բէն երթալ, որքա՞ն մը ձեռք կարկառել, թըշ-
ուառի մը միտնողական խօսք մը ուղղել,
գտնէ երթար լուրի աղօթել իր ժողովարանին
անկիւնը, փոխանակ օտար թերթի մը էջերը
իրեն քարոզալիս ընտրելու:

Շաբաթապահ քարոզիչը չի շատանար
քրիստոնէութեան ծոցէն վտարել հայ յեղա-
փոխականները, այլեւ իր շանթերը կարճակէ
յոյներուն դէմ, Կրէստէյի ապստամբներն ալ
անարժան հռչակելով քրիստոնեայ անունը կրե-
լու: Անշուշտ կարգը պիտի գայ Բուպայինե-
րուն: Դժբաղդաբար, այդ ինքնակոչ առա-
քեալը իր ձեռքը չունի Ս. Պետրոսի բանալի-
ները, ապա թէ ոչ՝ ապահովապէս արքայու-
թեան մէջ աւագ տեղը պիտի պահէր այն
թուրք խմբագիրներուն որոնց կը նուիրէ իր
թանկագին —կամ չենք գիտեր ի՞նչ գին—
աշխատակցութիւնը:

Բայց եթէ զուրկ է այդ երկնային շնոր-
հէն, շատ արժանի է երկրաւոր շնորհի մը,

—լաւ գրաքննիչ մը դառնալու Պոլսոյ մէջ:
Տեսէք թէ ինչու՛: Թուրք մամուլը «Կրէստէի
քրիստոնեայ ապստամբներ» բացատրութիւնը
կը գործածէ սովորաբար: Մեր շաբաթապահը,
plus royaliste que le roi, ելեր կը բողոքէ այդ
բացատրութեան դէմ «արդարութեան սիրուն
համար»: Ու այս առթիւ հայերը —իր ազգա-
կիցներն ալ— մէջ կը խառնէ:

Չարժեք որ աւելի զբաղինք այդ պատ-
ուելին անպատուաբեր յօդուածովը: Անցու-
ղաբար, պզտիկ խորհուրդ մը միայն պիտի
տանք իրեն. լաւ չընէ՛ր այդ գայթակղած
քարոզիչը՝ եթէ իր անձին յատուկ նոր աղանդ
մը ստեղծելով, շաբաթի տեղ «սուրբ պահ»
... ուրբաթը: Այն ատեն, բուն իր տար-
րին մէջ պիտի գտնուէր:

Ժողովուրդի մը գեղարդութեան օրե-
րուն մէջ է մանաւանդ որ երեւան կողման
բարբերու լաւ ու յոռի կողմը, անհասկերու
զգայման տարբերութիւնը, հանրութեան հետ
գործ ունեցողներու ինքնութիւնը, եւ ազնիւ
անազնիւն կը զանազանուի. այսպէս եղաւ
յոյներուն համար, այսպէս կըլլայ մեզի հա-
մար, ժամանակակից դէպքերու եւ գեղաբաց
վերքերու վրայ միայն խօսելով: Գրիչներ որոնք
թմրած կը մնային սովորական ատեն, մէկէն
ի մէկ կենդանութիւն առին պաշտելի եկե-
ղեցականներու դէմ շարժելու համար. ուրիշ-
ներ առիթը յարմար սեպեցին պարկեշտ ա-
նուններ աղարտել փորձելու. գիմակաւորներ
ու գիմակազերծներ իրարու յաջորդեցին: Հո-
սանք մըն է որ կողմէ կանցին, իր ճամբուն վրայ
թողլով թանձր խաւ մը ուր օրին մէկը պիտի
ստիպուի ու որոշուին նուրբ ուսման ու կոշտ կո-
պիճը, անարատ հոգն ու ազտութեամբ, թունալից
ժահրն ու կենսատու հիւթը Թո՛ղ այդ «ուրա-
թապահ»ին յօդուածն ալ երթայ ստուարացնել
արձակն այն անարգ գրութեաններուն որոնք
ազգին ճգնաժամին մէջ՝ ազգին համար աշ-
խատողներուն ու զոհողներուն դէմ ուղ-
ղուեցան:

ՇԱԲԱԹ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԼՍԱՐԱՆԸ

Եթէ չարախ գրչեր տիրող ջերմութեան աստի-
ճանը նուազ բարձր ըլլար եւ հանդիսական տիկին-
ներու թիւը աւելի մեծ, այդ անդրանիկ լսարանը
սպասուած յաջողութիւնը պիտի գտնէր:

Ընտանեկան հաւարումէ մը աւելի գիտական
համաժողովի մը երեւոյթը ունէր Ընթերցասիրայ
ընկերութեան սրահը:

Ատենախօսին ընտրած նիւթը եւ ունեցողներու
չափէն աւելի լուրջ ամփոփումը տարբեր արդիւնք
մը չէին կրնար տալ բերել:

Անձնուիրաբար խօսիլ յամաժողովուրդն ուր
ինչպէս նաեւ ունեցողներու եկող երկուսն ըստ
թիւը պէտք չէ մոռնան թէ այդ երկույթներուն
նպատակը բլիւզը հաճելի ժամադրութեամբ մը գոր-
ծընել է եւ ոչ թէ ժողովարանի ճնշող միջնորդ
մը տալ անոր:

Փութանք ըսել սովորեալ թէ Տիար Յակոբ Ասա-
տուրեան լուրջ, աշխատասէր եւ խնամուած գործ մը
կարգաց, «Մարտիկներու ընտելեցում» վրայ:

Անդիտայի կամ գերման գիտական մը տակէ
լուսազոյն կերպով չափաւ կրնար ճարել այդ ծանր
նիւթին վրայ, լայց եկաւ տես որ, մեր ժողովուրդը
գեղա սոցա՛լ գիտական այդ մեծ հարցերը ուղղուած
կերպով չի հասկնար, չի ճաշակիր եւ հետեւա-
բար չի մարտեր այդ տեսակ աշխատանքներուն
նէր, հակառակ ատենաբանին գովելի պերճախօ-
սութեան:

Եւ երբ կը մտածենք թէ այդ երկուսն ըստ
թիւը արդարապէս զուարճանալու գիտատարութեամբ
բլիւզ եկած է, բնականաբար ներքեւ կը գտնենք ոգե-
ւորութեան այն պահասը որ շատ աչքի գորկու
չարախ գրչեր:

Տիար Յ. Ասատուրեան, յուսանք, ի նկատի պիտի
առնէ մեր այս գիտալուծիչը, որ անշուշտ իրենն
ալ է եւ ազգային պիտի ջանայ գտնէ աւելի ուսմ-
կացնել իր նիւթը, այսպէս թէ՛ հաճելի եւ թէ՛ օգտա-
կար զայրկեաններ անցնել տալու համար իր սեղիւն-
դիրներուն:

Միւս կողմէ Ընթերցասիրայ ընկերութեան գոր-
ծադիր ժողովը միջոցներ ձեռք առնելու է, երկույ-
թին սովորող ծանրութիւնը միայն ատենախօսին ու-
սերուն վրայ չի բարդելու համար:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Ուրս մամուլին մէջ ալ սկսած է կազ-
մուիչ հակահայկական clique մը որ ամեն
Տեսակ գրաստութիւններով ու շարանիս
գրաւթներով կը ջանայ ուրս եւ վրացի
ժողովուրդին մէջ անշուշտ սերմանել հայ
ազգաբնակչութեան դէմ. բարեբաղդաբար,
փոքր քիւ մը կը կազմեն այդ քերթեր, եւ
քացի կովկասի հայ մամուլին՝ իրենց ընդ-
դիմախօս ունին ուսական ոչ նուազ կա-
րեւոր ու տարածուած յրագիրներ:

Այս անգամ, այդ նեղաշուք քերթերէն
մէկը, —Միւրովի Թոօլօքի, որ այս տարուան
սկիզբէն կը հրատարակուի Բեքրայուրկ—
նախանձեղով անշուշտ իր այն պաշտօնակից-
ներուն որոնք գիտար գերազանցել կողմէ
հայաժական ժողովուրդի մը դէմ մղուած

պայտարին մէջ, բոլորովին նոր ու ինքնասեղծ գրպարտութիւն մը հրապարակ կը ներկայացնէ. այն է կասկածելի դարձնել էջմիածինը ու Մայր Աթոռի միաբանութիւնը ռուս կառավարութեան աջին, հաւատարմութեան ոգեւոր թէ Հայոց Կաթողիկոսը ու Սինոդականները մաս ունին Թուրքիոյ Հայոց շարժման մէջ եւ կը նպաստեն անոր, դրամադարձեցով:

Իր օգոստոս 14ի խնդրագրականով, Մշակ հասոյ ռճով մը կը ներքէն ու կը հարուածէ այդ հրապարակութիւնը:

Քննադատել Հայոց կրօնական կենտրոնը եւ նրա վարչականներն—կը գրէ խորհրդատու Արթուր Սեփէր. թը—կորով է ամեն մի ուսուցիչը, բայց քննադատութեան փոխարէն ցեխ չարտել մի ամբողջ հիմնարկութեան վրա, ակնարկելով որ էջմիածնի վանքը յայտնի է միայն կեղծ փող կորելով եւ կամ հակապետական ձգտումներով, կարող է անել միայն այն մասնաւոր որի համար ճշմարտութիւնը եւ ազնուութիւնը անկէ շարժէ քան թէ փողով ցելը:

Մշակը, շատ իրաւամբ, էջմիածնի պատահիւն անարժան ու իր խնդրագրութեան համար ալ անախտ կը նկատէ միւսին իսկ պատասխանելու եղբայր այդ քննական ստորմէն դադարեցնելու. կը յիշեցունէ միայն Բեդրեայտի յարգումն թէ «էջմիածնում նրա սած է ներքին գործերի միջոցով ներկայացուցիչ՝ Սինոդի Պրոկուրորը, որին օրէնք իրաւունք է տուել խառնելով փառքի բոլոր գործերի մէջ, որը մասնակից եւ ակնաւոր է Սինոդի իւրաքանչիւր ֆայտիսին, եւ առանց որի գիտութեան, վերջապէս, էջմիածնում չի կարող կատարվել եւ չի էլ կատարվում եւ ոչ մի գործ կամ կարգադրութիւն»:

Տարիներու ընթացքին մէջ, Մշակը խիստ փնտրատող մը եղած է էջմիածնի քերականներուն. բայց այսօր իրեն պարտ է կանոնի քննարկութեան աւելի ուժով բողոքել Միւրովիէ Օթօրօքի դէմ որ կուգէ ռուսներ ձգել Հայոց կրօնական կեդրոնին վրայ:

Հայր հայուն հետ՝ երբ խնդիրը օտարին դէմ մտադրելու վրայ է. շատ գեղեցիկ է օրինակը գոր կուսայ այս առթիւ Թիֆլիզի մեր յարգելի պաշտօնակիցը:

Որքան պատմութիւններ վրայ յարձակում է հարապատ մայրը եւ խորթ մայրը: Բայց այն դոմա, դոմութեանը որ հարապատ մայրը իր յարձակումներով ուզում է ուղղել որդուն եւ աղաւթել նրան խառնապատմութիւնից. իսկ խորթ մայրը, ընդհակառակը, յարձակում է միայն նրա համար որ խառնապատմութիւնը որդուն: Գայտնի լրագրիչներ (ուսուցիչներուն կողմէն) համարձակ են Հայոց էջմիածնի խորթ մորի է:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ թերթերը որեւէ յիշատակութիւն չեն պարունակելու Եղեռնադատ ատենի վճռին վրայ որով մահուան դատապարտուած էին օգոստոս 6/18ի դէպքին առթիւ ձերբակալուած Հայերէն ութը: Իսկ մինչեւ երէկուան Սուրհանդակով առնուած եւրոպական թերթերը անուններու ցանկ մը միայն կը հրատարակեն, առանց ո՛ր եւ է մանրամասնութեան: Աւստիկ այդ անուններ նշանակութեամբ:

Պօլսոյ, Կալաթիա-Սէրայի մօտ նետուած ուսմբին առթիւ. Բազէ (°) որ Պանք Օթօմանի մէջ բռնուած էր ու վրայէն ուսմբ մը գտնուած: Արտաշէս՝ մեղսակից Պօլսոյի Սէ-

րայիս (°) Դաւթիոյ յեղափոխական մասնախումբին պետը, Մօրան (°) որ Լեհ փողոցին տանը մէջ ձերբակալուած էր ու գոմիթէի երեք ուրիշ անդամներ՝ Արմենակ, Միհրաբար(°) եւ Աբրահամ: Ասանք մահուան դատապարտուած են: Իսկ ամբաստանեալներէն երկուքը, Միւրաք եւ Թապարեան անպարտ արձակուած:

—Թալանկին Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ «Հայոց Պատրիարքարանի ժողովը հրաւիրուել է շուրհակալութեան ուղերձ մը պատրաստել, Սուլթանին մատուցանել, այն լարիկամեցողութեան համար զոր Բատիշահը ցայց տուաւ այդ հատարակութեան նկատմամբ, վերջին դէպքերուն առթիւ»:

—Կ. Պոլսէն կը հեռագրեն Նայե Թրայէ Բրէսէին թէ Բ. Դուռը ինդերերէն ուսմանական կառավարութեան իր հոլէն, եւ մասնաւորապէս ծովեղերեայ քաղաքներէն արտաքսել այն բոլոր հայերը որոնք կասկածելի կերեւան եւ կամ ապրտաւոր միջոց չունին:

—Սեպտեմբեր 4 թուականով կը հեռագրեն Սեւանիկէն եւրոպական թերթերուն. «Գաղաքը միշտ հանգարտ է. սակայն ստիկանութիւնը արտասովոր խտտութիւն կը բանեցունէ եւ կը հսկէ այստեղ բնակող քանի մը հայերու վրայ: Բազմաթիւ արտաքսումներ տեղի ունեցան եւ երկու ձերբակալութիւն որոնք բաւական յուզում առաջ բերին»:

—Կ. Պոլսէն հասած նորագոյն հրամանի մը համաձայն, Էտհէմ փաշա հրահանգ խրկել է բոլոր զորաբանակայ պետերուն՝ զանոնք համախմբել Թեսալիոյ զանազան կողմերէ: Ռազմական կէտերուն վրայ, ուր բանակին ստուար մասը կը գտնուէր, սակաւաթիւ պահպան զօրքեր միայն պիտի թողուին: Այս նոր կարգադրութեան հետեւանօք, երեսուն հազար օսմ. զօրք պիտի համախմբուին Փարսալա —Վէլէսոփիսի գծին վրայ եւ ամբողջ զորաբաժին մը պիտի զրկուի Լարիսայէն անդին գտնուած դաշտը: Այս անօրինութիւններէն զատ, որոնք անշուշտ ձեռք առնուած են մօտաւորապէս ձմեռուան եւ կամ Թեսալիան պարպելու նախապատրաստութեան համար, զինուորական հիւանդանոցներու անօրէնները հրահանգ ստացել են ապաքինածները զրկել ո՛չ թէ իրենց պատկանած բանակեղբ, ինչպէս կըլլար պատերազմի սկիզբէն ի վեր, այլ դէպի Վօլո, որպէսզի կարելի ըլլայ զանոնք Սեւանիկ կամ Կ. Պոլիս զրկել:

—Աթէնքի թերթերը կը գանգատին հաշտութեան բանակցութեանց երկարաձգումէն զոր աղետաբեր կը նկատեն Յունաստանի համար: Եթէ Թեսալիոյ օսմ. զրաւումը դեռ վեց շաբաթէն աւելի տեւէ, կ'ըսեն, առաջիկայ տարուան հունձը կը վտանգուի՝ վարուցանի եղանակը անցնելով:

—Ռուսթի երէկուան հեռագիր մը կը հաղորդէր թէ Անգլիա եւ Գերմանիա գործնականապէս համաձայնել են լրրո Սոլդատէրի առաջարկին վրայ ի մասին պատերազմական սուղանքի վճարման, որուն չի պիտի ենթարկուի Թեսալիոյ պարպուելուն խնդիրը, այսինքն թէ Թեսալիան պիտի կրնայ պարպուիլ հաշտութեան նախնական պայմաններու կնքումէն անմիջապէս ետք:

Լորտ Սոլդատէրի առաջարկն է հետեւեալը. վեց տէրութեանց իւրաքանչիւրին կող-

մէ նշանակուած մէկ մէկ պատուիրակի մասնակցութեամբ միջազգային յանձնաժողով մը պիտի կազմուի որուն քննդրոյն պիտի ենթարկէ Յունաստան իր այն հասցիները որոնք կը բաւեն պատերազմական սուղանքին առթիւ կնքելի փոխառութեան ինչպէս նաեւ արտաքին պարտքին սոսկոններու վճարման ու երաշխաւորութեան:

—Վիէնայի Բօլիթիքէ Բօրեսքոնսէնանին տեղեկութեանց նայելով, հեյլէն կառավարութիւնը ծանուցել է մեծ Տէրութեանց թէ պահեստի վերջին կարգէն տառն հազար դիւնուար արձակած է, եւ թէ միւսներն ալ իրենց տեղերը պիտի զրկէ սեպտեմբերի կէսէն ետք:

—Դեսպանատանց թարգմանները նախորդ շաբթուն յիշատակագիր մը յանձնել են արտաքին գործոց նախարար Թէվֆիք փաշային՝ ինդերելով որ յայն գաղթականներուն վերադարձը դիւրացուի:

Նախարարաց խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է Սուլթանին կողմէ, պատերազմի մէջ բռնուած այն հեյլէն գերիները որոնք օսմ. հպատակ են, պիտի դատուին հրապարակաւ: Նոյնպէս պատիժներ պիտի սահմանուին այն օսմ. հպատակներուն նկատմամբ որոնք պատերազմի ատեն Յունաստան գացած էին:

—Թալանկ կը հրատարակէ անգլիանակ նշանաւոր հրէի մը՝ Օսլաւա ձոն Սիմոնի մէկ համակը, որ Մեծն-Բրիտանիոյ բարունապետին հրապարակային յայտարարութեանց վրայ յենելով, կը բացատրէ թէ Պալ քաղաքին մէջ վերջերս գումարուած հրէական համաժողովը (որուն նպատակն էր Երուսաղէմը գնել) անմատուցիւն մըն է պարզապէս եւ թէ Պաղեստինի մէջ հրէական պետութիւն մը հիմնելու խորհուրդը աղետաւոր խորհուրդ մըն է: Անգլիոյ հրէայնները որոնք կուզեն ազգով անգլիացի ու կրօնքով հրէայ մնալ, կը դատապարտեն այս ձեռնարկութիւնը: Հրէական պետութիւն մը հիմնելու գաղափարը ծագում առած է այն հրէայներու ուղեղին մէջ, որոնք կը հարստահարուին ու կը հալածուին իրենց տեղը, բայց Անգլիոյ, Ֆրանսիոյ, Իտալիոյ եւ Միացեալ Նահանգաց մէջ, ուր հրէայները քաղաքային իրաւունք ունին եւ կը սիրեն իրենց հայրենիքը, ո՛չ մէկուն միտքէն չանցնիր հրէական պետութեան մը հաստատութիւնը:

Միւս կողմէ, Հոսմէն կը հեռագրեն Տէյրի Նիզլին, թէ Պապը Հոսմ հրաւիրել է Կ. Պոլսոյ պապական պատուիրակ մինսէնսէօն Պօնէթին, հարկ եղած միջոցները խորհելու համար որպէս զի այս «սիօնական» շարժման առաջը առնուի:

—Սեպտեմբեր 7էն սկսեալ, Կրետէի օսմ. ժանտարմանները՝ եւրոպացի սպայներու հրամանատարութեան ներքեւ դրուել են: Այս վերջիններն յանձն կառնեն անոնց ծախքերը, պայմանաւ որ կողմին մաքուային հասցիներ կէսը իրենք գանձեն:

Սթանսարսին Հանեայի թղթակիցը վերապահութեամբ զրոյց մը կը յիշէ, թէ ձէվատ փաշա ինդերել է որ ինք ետ կանչուի այլ եւս:

ՄԵՐ ՀԱՆԴԵՍԸ

Ազեխանդիա, 13 Մայիս.

Խաչուր, խաչուր, խՈՇՈՐ յաջողութիւն մը, «հրէշ — յաջողութիւն» մը եղաւ տեղւոյս հայ սրտատարեալներու ի նպաստ տրուած ցայգահանդէսը: Կիրաւ կը գիշերէր Ահմադաղայի պարտէզին մէջ, գիտէք:

Յաջողութիւն «հիշուն գրամ» ի մասնաւոր, երկու հարիւր յիսուն սակի ժառանգութիւն, զուտ, և մի մասնաւոր որ հայ գաղթականներու համար ասիկայ երկրորդ նարատն է, երրորդ արիւնտուութիւնը, սեփեհն, ինչպէս կըսուի:

Այս շէն ու խնդումներն բարձրը որ բարեգործութեան համար իր գրամը չը հաշուէր՝ լիաբուն տուաւ այս անգամ ալ: Տալէ աւելի տալու եղանակին մէջն է վեհանձնութիւնը, և մասնաւորաբար օտար բոլոր անհրաժեշտ անդամները 24 ժամուան մէջ ապահովուցած էին նիւթական փառաւոր յաջողութիւնը: Անոնցմէ և ոչ մին մերժեց անդամակցութիւնը, «անձնական տիրութեան», և կամ ինչ ինչ պատճառներով՝ որք հայկական պատճառներ են մասնաւոր. քեֆօմով փութացած էին խաչուր նախաձեռնարկ անդամներուն թէ ընդունած են, ամենքն ալ: Իրր մարդ ու իրր հայ՝ կարելի չէ չըզգածուի այս եղբայրարկական ինքնաբերական արտայայտութեան առջեւ որ օտարներէն կուզայ:

Տիար Հայկ Էթիզլէր՝ անձնուիրութեամբ մը որ երկը չը պիտի ատաղձի՝ օժանդակ ունենալով իւրեն Տիար Զարեհ Սըլիմզլէր որուն խիստ զիմուռ ներքին հանգիստ ու է վարձուած չը գիտանար՝ հը պարտ կրնան ըլլալ այն արդիւնտուր ու գեղեցիկ հանգիստ նախաձեռնութիւնն ունեցած բոլորներն համար: Այս ստեղծը ի յարգանս իրենց հիանալի աշխատքին:

Հանգիստը.— Զուարթ, լուսաւորած, կոնքիւնները համար չունին, և կը գուշակէր արդէն որ լուսաւորութեանց հետ գրողակներու փոփոխ մը և գեղեցիկ նուազաւորութիւնը նմանորինակ դաշտահանդէսի մը կեանքը կազմէ: Ամբողջ որ խառնեալ ըլլալուն հակառակ ընտրեալ է նորին՝ չը գիտեր որ զուարթութեան համար, կիներու ու տղայ լէզէն մը Ֆանթոմներու թատերասրահը ուր ալ չունչ չառնուիր, կըսեն թէ Ֆանթոմ մը տալէն . . . մարեր է. մագական լատերներու, Թիքի, Սիքեմարօփաֆի, վիճակահանութեանց սրահները պատիկ մատուցներ են ուր Ֆիսիկները անպակաս, ազգին կշիռը, ուր երկու պուշէ թեթեւաւոր՝ ծանրութիւնիդ կրնար իմանալ. անոր ժառ Բարուսիլը և ունելի հետուն բըրի Երվո. այս միմիմիմի ձիերը երկը չը յոգնեցան հինգ ժամուան քառատորսի փազէ մը վերջը. այս ամեն գուարժութիւնները եռանդուններուն համար, իսկ պաղհներու ատուար խառն մը որ շատեր տեսած է՝ պարտէզին զովութիւնը կը շնչէ և . . . գեղեցիկ բուսականներու արտաբերած անուշահոտութիւնը, հաւատալէք որ ամենէն անխելքները չեն: Բայց զուարթութեանց ցանկաւ զոյգուած չը օգտէր, առասիկ սիրուն saynète մը զոր պարտէզին բեմին վրայ կը ներկայեն մեզ ֆրանսերէն, ներքը բիշ մը վերջը պարահանդէսը պիտի սկսի, և անկից առաջ խառնացի կատակերգական է զոր մտիկ կընենք ահա. նուազախառնը կրկին է. կատարեալ նուագի փառաւորութիւն մը: Գիշերը առաջացած է. կարգը վիճակահանութեանն է. գործնական մարդիկ կան որ մատիալը և թղթի մը կտոր ձեռքերին՝ կապտեն սրտատորսի իրրեւ ձիարշաւի մը. գիտէք որ վիճակահանութիւն մը կայ հինգ պարգեւով, 10 ոսկի, 5 ոսկի, և հինգ թիւ մէյմէյ ոսկի. Օրիորդ Մոռօզլինի խառնացի շնորհաշէնը երգչուհին, որ բիշ առաջ 10 ոսկիի տոմսակ ծախած է իր անդիւնդը, բելի հմայքով՝ կը քաշէ ձիաց շահող թիւերը որ ոչ իմա են և ոչ գրայինիս. մագիթենը Օլէնտօրֆին հետ որ . . . «այլ կօշկակարին» ըլլան, այսինքն ամենէն կարօտին: Կուզէք սիրուն միջոցաւ մը. Օր. Մոռօզլինի կը չըլի վիճակահանութեան տոմսեր դէտեղելու, ընկերակցութեամբ համակրելի օտար երկ տատարդի մը որ գրամները կը գանձէ. հանգիստական մը որ տոմսակ կառնէ. . . կառնէ նաեւ պատիկ համար որ մը գեղանի երգչուհին մասներուն վրայ. — Հինգ ֆրանք է Պարոն, կը գոչէ ընկերացող, երկ տատարդը ժպտելով, ձեռնարկու պարունին. և որովհետեւ պարունը տալը ֆրանքնոյ մը ունէր միայն 5 ֆրանք ետ տանելու տեղ . . . կը հաշտակցի:

Կէս գիշերը երկու ժամ անցած է. ամբողջ կը ցրուի, դժգոհ . . . հանգիստն այսրան շուտ աւարտած ըլլալուն համար. սրտահանդէսը սկսած է հիմայ թատերասրահը, և լուսաւորութիւնները կը տեսն միւտ: Կը մեկնինք մենք. գիտական է գիշերը, ըզգըլթիչ սիրայ պէս. կրայած լուսինը, իրրեւ հանգէսին երջանիկ նախադաս՝ իր գոհունակ դէմքին սկաւառակը կը սրտդ, ճառագայթող ու չըբեղ: Ահ, բարի լուսին, այն սրահուն ուր հայերու լուսաւոր խառնաձեռնութիւնները հովանաւորեցիր, հոս, ամբողջական հիւրընկալ չոցին մէկ անկիւնը՝ իցլէ թէ նոր սող մը տեսած չըլլայիր անկիւն, խառն ու աւեր գաշտին վրայ որ Հայաստանն է:

Գ. ֆ.

Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ս Ի Ր Ա Ց Լ Ս Ա Ր Ա Ն Ը

Գահիրէի Ընթերցասիրայ ընկերութեան երկրորդ լարանը տեղի պիտի ունենայ առաջիկայ շաբաթ գիշեր, ժամ 9ին, Գիլայի սրահին մէջ: Առնանալուն է ծանօթ ուսուցիչ Տիար Յովհաննէս Սեթեան որ դրական նիւթ մը ընտրած է՝ վերջոր Հիւկի «Ծովու աշխատանքները»:

Գաղարներու միջոցին սիրուն նուագահանդէս մը պիտի կատարուի, գաշտակար Պ. Արիքօ Սանթի. նի և երկրորդը՝ Պ. Պօղոս Ճամճեան:

Տեսնուած արտաստուութիւններէն դատելով, այս երեկոյթը կը խոտանայ առաջինէն աւելի հոգեւոր ըլլալ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Սուտան արշաւող բանակին կեդրոնէն եգիպտոսի պատերազմական պաշտօնատունն հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ Հընթըր փաշա Պէրպէր մանեւուն պէս՝ երկու թնդանօթակիր ճամբայ հաներ է տէրփինքուն ետեւէն որոնք այդ քաղաքը ձգած փաշած էին գէպի էլ-Տամար և Մէթէմէ: Թընդանօթակիրները նեղուն ի վեր նաւարկելով, փախտականներուն հասեր են էլ-Տամար գետեղերէն որ Պէրպէրէն 35 մըն հեռաւորութիւն ունի: Էմիր Զէքի, որ կը հրամայէ տէրփինքներուն, այս հալածանքին առջեւ ուժաւորաւ, իր մարդերով երկրին ներսը քաշուեր է, թողլով 14 նաւ որոնք պաշար կը պարուսնակէին. թնդանօթակիրները զանոնք գրաւելով՝ Պէրպէր վերագարձուցեր են:

Հեռագիրը կը յարէ թէ տաքը սաստիկ է այն կողմեր, բայց բանակին առողջապահական վիճակը գոհացուցիչ է: Սպարապետ Քիչնէր փաշա, որ մինչեւ ցարդ Մէրափի կը գտնուէր, Ապու Համաա հասեր է:

Ապու Համաաի և Վաաի Հալֆայի միջեւ երկաթուղին շինութիւնը առաջ կը տարուի փութով և 165 երորդ մընին հասած է արդէն:

— Անգլիական Ասորեա մարտանաւը որ 10 թնդանօթ ունի և 318 նաւազ, երկուշաբթի օրը Աղեքսանդրիոյ նաւահանգիստն հասաւ Մալթայէն:

— Ֆառ s'Արիստի մէջ կը կարդանք. «Թուրք կառավարութեան խնդրանք, քաղաքի սատիկանութիւնը երկուշաբթի օրը ձերբախլեց օսմանեան հպատակ մը որ ամբաստանուած է թէ վեց տարի առաջ սպանուած թիւն մը գործած էր Հալէպի մէջ: Ոճիւրը գործելէ անմիջապէս ետք փախչելով, Աղեքսանդրիա ապաստանած էր ուր խանութ մը բացած էր և հանգաւորէն կախատէր կեղծ անունի մը տակ: Ի մօտոյ թուրք կառավարութեան պիտի յանձնուի: Ամբաստանեալն

ինչպէս նաեւ իր ոճիւրը մոռցուած էին օսմ. իշխանութեանց կողմէ: Բայց մէկը՝ որուն հաղորդած էր իր գաղանիքը, մատներ է զայն»:

— Բաղաքի Բէնասուն գրատան պաշտօնեայներէն Պ. Նաուաի նախընթաց օր Աղեքսանդրիոյ Պըլլէյ ծովեղերէն բացերը լողաւ պահուն, յանկարծական ուժաթափութիւն մը ունենալով, խղճուեր է:

— Ի պատասխանի այն հակադրական թերթերուն որոնք շարունակ կը դանդաղէին թէ ապահովութիւն չկայ Նգիպտոսի մէջ և այս կացութիւնը բրիտանական վարչութեան կը վերագրեն, Բոսիլի կը յանձնարարէ հետեւեալ հեռագիրը որ Թունուզէն ուղղուած է Բարիդի Թաւ լրագրին:

«Թունուզ, 4 սեպտ.— Էնֆիտայի կալուածոց նախորդ տնօրէն և Ալեքսիոյ նախորդ խորհրդական Պ. Մանճափաքի սպաննուած գտնուեցաւ իր տանը մէջ ի Թունուզ, արաբական թաղին կեդրոնը:

«Կըսուի թէ այս ոճիւր վրիժառութեան արդիւնք է:

«Ժամանակէ մը հետէ սպանութիւնը յաճախագէպ կը դառնան ի Թունուզ»:

Եթէ Պ. Վէլլի սպանման առթիւ առաջ կը բերուի այս փաստ, մեզի կերեւայ թէ Նգիպտոսի ընդդիմախօս թերթերը օմէօքաքի գրութեամբ կը վիճաբանին՝ քաղաքի մը մէջ գործուած ոճիւրներուն տալաւորութիւնը ուրիշ քաղաքի մը մէջ գործուած ոճիւրներուն տալաւորութեամբ փարատել ուղեւոր:

— Նգիպտական բանակին նախկին սպարապետ Բաթիպ փաշայի համար որ Լանտուն կը գտնուի, լուր տարածուած էր թէ մեռեր է և մինչեւ իսկ քանի մը թերթեր զայն հրատարակեցին:

Այդ լուր բոլորովին անհիմն է եղեր:

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑ ԹՐԱՄՎԷՅՆԵՐԸ

Շաբաթ օրը տեղի ունեցաւ Աղեքսանդրիոյ երեքտորական թրամվէյներու գծին բացումը:

Բարձ. Խաիմ, բոլոր նախարարները և բարձրաստիճան պաշտօնատարներ ներկայ գտնուեցան այդ հանդէսին: Մէհմէտ Ալիի հրապարակէն մեկնող անդրանիկ կառավարուի իր մէջն ունենալով Ն. Բարձրութիւնը ժամը 4ին ճախայ երաւ գէպի Մէքս, ուր յատկապէս չքանալուն պատրաստուած էր: Խաիմը կէս ժամու չափ երեկտական գործարանները պտըտելէ վերջը կառքով քաղաք վերադարձաւ:

Երկրորդ կառավարութիւն սկսեալ ահագին տարի մը ինքզինքը ելերտրական հասանքին տալով Մէքս գնաց:

Նորահաստատ թրամվէյը իր պաշտօնադէպ բունի սկսած ըլլալը ժողովրդեան հասկնելու համար երէկ Մարապետներու փողոցին մէջ գծէն դուրս ելաւ: Բարերաղքաբար կեանքի վնաս չկայ ուրիշ շատ մը սկեպտիկներ կը հետեւցնեն թէ Աղեքսանդրիոյ թրամվէյները դեռ շատ խափ են իրենց պաշտօնին մէջ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 14 սեպտ.— Գետալանները համաձայնեցան Թեսալիոյ պարպուելու մասին:

Ա.ԹԷՆՔ, 14 սեպտ.— Տէրութիւնները ընդունեցին Յունաստանի առաջարկութիւնները:

Թուրքիոյ և Յունաստանի միջեւ առեւտրական ու շոգենաւային հաղորդակցութիւնը պիտի վերջսկսի:

ՃՕՐՃ ԲԱՆԱԼՐ

Անցեալ շաբաթ մեծագոյն պարսկական գործարանատէր մըն է Ճօրճ Բալմըր որ Անգլիոյ իտալական Պ. Կրատսթընի և Լորա Ռոպերթսի ախար, զեռ չի մեռած իր արձանը ունենալու փառքին արժաւորացաւ :

Ճօրճ Բալմըր ոչ մեծ զիւնաղէտ մը և ոչ ալ տաղանդաւոր գրագէտ մը կամ արհեստագէտ մըն է, պարզ գործարանատէր մը եղած է, որ Պ. Հընդլէյի ընկերակցութեամբ Huntley and Palmer աշխարհ համառօթ պարսկական գործարանը հաստատած է :

Ռիտինկ քաղաքի ընկերները տալը տարի, ի վեր գիտատարութիւնն ունէին այդ մարդուն յիշատակը յաւերժացնել իր ըրած անհամար բարեգործութիւններուն փառքէն և այդ նպատակաւ իր ծննդավայրին մէջ Ճօրճ Բալմըրի արձանը կանգնեցին որ ամենէն լաւ միջոցն էր իրենց փառագը և բաժանացնելու :

Բալմըրի արձանը գործարանատէրով ճշգրիտ պատկերը կը ներկայացնէ . զայն շինող արուեստագէտը չէ ոգած այդ բարի մարդուն զիւրը կամ հազուադէպ տպագրութիւնը . պիտի թուէր ճօրճ ինչպէս որ էր պարսկական գործարանատէրը իր կենդանութեամբ :

Ռիտինկ այցելող օտարականը քաղաքին էն փառաւոր մէկ հրապարակին վրայ կը տեսնէ այդ պիտի թուէր ճօրճ : Երբեք գործարանատէրն է իր ամենօրեայ հագուստով ներկայացուած . ժպտուն փառքեր իր զէմը կը ծածկեն, գլուխը բաց է, մէկ ձեռքով հովանոց մը բռնած է և միւսովը զլխարկը :

Առաջին անգամն է որ արձան մը կը շինուի այդ ընտանի տաղանդներով շրջապատուած :

Այդ արձանին հանդէպ մարդ տեսնածներ մը կը զգայ և տեսնող մը յարգանք կուգէ նայիլ մեռու գրական պատկերի մը որ աշխատութեան հերոս մը և տաղանդութեան տիպար մը կը ներկայացնէ :

Ենթադրուի աղանական և ահագին հարստութեան տէր՝ շատեր կան որ այդ պարզ մարդուն ձեռք անցուցած հարստը չեն կրցած շահիլ և այդպէս կորսուած են մեծ ոչնչութեան մէջ :

Ասիկն պարսկական շինող մը կանխահաշու, կուսենայ իր արձանը որու անունը ամեն օր պիտի լինէ ինչպէս նոր սերունդներուն . և ինչպէս, որովհետեւ Ճօրճ Բալմըր իր ամբողջ կենսանքը զոհած էր իր նշանակալից օգտակար ըլլալու և շատ մը բարեգործութիւններով իր քաղաքայինները երախտապարտ ըրած էր իրեն :

Ա Ձ Դ

Տիկին Սոփիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարձարանէն, այժմ բնակութիւնը Դաւիթ հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցանել հայ հաւարակութեան որ պատահաւ է իր խնամքները ալ իրեն պէտք ունեցողներուն :

Իր երկարամեակեայ փորձառութիւնը եւ խորհամիտ աշխատութիւնը զինքն բաղադրաւ առաջնակարգ մանկաբարձերու կարգը կանցընեն :

Դիմել Շուպրա, Չամաշիւ փողոց թիւ 12: Եւ կուսաբքի եւ հիւնդաբքի օրերը առաւօտուն կը գրքնուի Սարաֆեան դեղարանը ի Պեն-Էլ-Սուրեան :

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր ՈՒՒՆ
ԱՄԵՆ ԼԵՁՈՒՆ ԵՐԱՐԵՐԱԿԱՆ
ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԻԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱԲԱՐՏ
ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ
ՀԱՇՈՒՆՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻՒ
Տ Ո Մ Ս Ե Ր

Եղիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Այցաւստերու եւ տնտեսուի

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպարանիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԷԲԱՆՏՐ Ժ. ԲԵՍՏԱԶՈՂԼՈՒ
Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթիւղիկերու .
Կանխավճար արժեթիւղիկերու վրայ .
Հանձնարարութիւններու հաշուին համար գանձումները ընել եղիպտոսի և արաւաահանների զիւնաւոր քաղաքներու մէջ .
Պայմանաւորումներ արժեթիւղիկերու, օրինաւոր պայմաններով :

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Պարբ փողոց Եղիպտոսի հասցրատան գէմ Բէստազօղլու գրաստանը :

ՀՐԱՆՏ ԱՁԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒՍՑԱՐԱՐ

Էօզպէրլէ, հայկական պանդոկին քովընտրի կամարակապ փողոցը բացած խանութին մէջ ամենէն դժուարահաճելի զոհայներու եղանակաւ կ'արդուի շապիկներ և այլն տալուական գիններով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵԲԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	Սմիւր 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Սմիւր 1,2,3,4,5	Էրարէս 1, 2 կգ.	Սմիւր 1,2,3,4,5	Էրարէս 1, 2 կգ.	Սմիւր 1 2 3 կարգ	Էրարէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա)	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Թանթա)	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհար	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	երեկոյ 7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵԲԱՆԳՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Սմիւր 1,2,3,4,5	Կէս ուղ. 1,2,3,4,5	Սմիւր 1,2,3,4,5	Էրարէս 1 2 կգ.	Խառն 1,2,3,4,5	Սմիւր 1,2,3,4,5	Էրարէս 1 2 կգ.	Սմիւր 1 2 3 կարգ	Էրարէս 1 2 3 կարգ
Ալեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհար	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա)	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Թանթա)	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆԻ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆԻ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէլ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա)	ժամ. 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա)	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Զակաղիկ)	ժամ. 1 34	8 54	Զակաղիկ)	ժամ. 3 7	8 53
Զակաղիկ)	մեկ. 1 44	9 4	» մեկ. 3 17	մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա)	ժամ. 4 13	9 47
Սիւէլ կայարան	ժամ. —	5 —	» մեկ. 4 17	մեկ. 4 17	9 4
Տօր (բարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպարանիւն ՓԱՐՈՍ Լրագրի